Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի « Աղինի միջնակարգ դպրոց »ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի քսաներեք(23դասաժամ)ուսուցչի թափուր տեղի համար:Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

Դիմում(Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի

Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

Անձը հաստատող փաստաթուղթ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում) ,

Ինքնակենսագրություն(Ձև 5), այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

Հրտարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),

Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ը,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 11-ին՝ժամը 15.00-ին,ՀՀ Շիրակի Մարզի Աղինի միջնակարգ դպրոցում,հասցեն՝ Շիրակի մարզ,Անի համայնք,գ.Աղին,փողոց 5,շենք 25:Տեղեկությունների հանար զանգահարել՝(093-59-35-05) հեռախոսահամարով: